

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Ձ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մ Ա Ր Ձ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ Ի

15-րդ դեկտեմբերի 2015թ.

Ք. Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2015թ. դեկտեմբերի 15-ին ժ.12⁰⁰-ին կայացած Տավուշի մարզխորհրդի նիստի

1. 2015թ. դեկտեմբերի 6-ին կայացած ՀՀ սահմանադրության բարեփոխումների հանրաքվեի արդյունքների մասին

Զեկ.՝ Մ.Մխիթարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

2. Մարզի համայնքների 2015թ. 11 ամիսների դրությամբ սեփական եկամուտների կատարառդականի մասին

Զեկ.՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

3. Մարզում 2015թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման մասին

Զեկ.՝ Վ.Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

4. Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականության, արդյունավետության և ստուգման արդյունքների ամփոփում

Զեկ.՝ Մ.Մելքոնյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

5. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15.12.2015թ.

ք.Իջևան

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 58-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

1. 2015թ. դեկտեմբերի 6-ին կայացած ՀՀ սահմանադրության բարեփոխումների հանրաքվեի արդյունքների մասին

/Զեկ.՝ Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի
ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրապետությունում անցկացվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե:

Տավուշի մարզում կազմավորված թիվ 40 և 41 ընտրատարածքներում ընդգրկվել են մեր մարզի բոլոր 62 համայնքները, որոնցում քվեարկությունը կազմակերպելու և ընտրողների ձայները հաշվելու նպատակով կազմակերպվել են 96 ընտրական տեղամասեր, որոնցից 54-ը՝ թիվ 40 ընտրատարածքում, 42-ը՝ թիվ 41 ընտրատարածքում՝ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կողմից սահմանված հերթական համարակալմամբ: Բոլոր տեղամասային կենտրոնները կազմավորվել են ՀՀ Ընտրական օրենսգրքի 16 հոդվածի պահանջներին համապատասխան: Դրանք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին նախապատրաստվել են հանրաքվեն բնականոն ընթացքով անցկացնելու համար, ապահովվել են անհրաժեշտ գույքով ու պարագաներով:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 42 հոդվածի համաձայն բոլոր տեղամասերում, սահմանված կարգով, կազմավորվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներ, որոնց կազմերում առաջադրվել են ինչպես Ազգային ժողովում ներկայացված ՀՀԿ-ի, ՀՅԴ-ի, ՕԵԿ-ի, ՀԱԿ-ի, ԲՀԿ-ի, „Ժառանգություն,, կուսակցության մեկական անդամներ, ինչպես նաև Ընտրատարածքային Ընտրական Հանձնաժողովի կողմից նշանակված երկու անդամներ:

Մարզի ընտրատարածքներում գործել է վստահված անձանց ինստիտուտը, իսկ հանրաքվեի ընթացքին հետևել են դիտորդներ ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, որոնց առաքելությունը խոչընդոտող ոչ մի փաստ մարզի տարածքում չի արձանագրվել:

Մեծ ծանրաբեռնվածությամբ ու բարձր պատասխանատվությամբ են աշխատել ոստիկանության չորս բաժինների անձնագրային սեղաններն ու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց համագործակցության արդյունքում մենք ունեցանք առավելագույնս ճշտված ընտրացուցակներ: Դրանց նախնական օրինակները ժամանակին կազմվել և սահմանված վայրերում՝ բոլորի համար տեսանելի տեղերում փակցվել են: Նկատված անճշտությունների ու բացթողումների վերաբերյալ դիմումները ժամանակին քննարկվել ու ընթացք են տրվել, իսկ ընտրությունից 2 օր առաջ ընտրացուցակների վերջնական օրինակները փակցվել են տեղամասային կենտրոններում:

Ինչպես ընտրական հանձնաժողովները, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները սերտ համագործակցության մեջ են եղել ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների հետ, որոնց պարտաճանաչ ու օպերատիվ գործունեության շնորհիվ ապահովվել է ընտրությունների բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների անկաշկանդ աշխատանքը, որի համար անհրաժեշտ է երախտիքի խոսքեր ուղղել իրենց ծառայական պարտականություններն անթերի իրականացրած բոլոր անձանց հասցեին:

Մարզի տարածքում հաշվառված **109487** ընտրողներից, որոնցից **2657**-ը եղել են ժամկետային զինծառայողներ, ընտրություններին մասնակցել են **52927**-ը, կամ մասնակցության տոկոսը կազմել է **48,34** տոկոս:

ԱՅՈ -ին կողմ են քվեարկել **30949** ընտրողներ՝ **58,47** տոկոս, **ՈԶ-ին 19652** ընտրողներ՝ **37,13** տոկոս: Անվավեր է ճանաչվել **2247** քվեաթերթիկ:

ԱՅՈ -ին կողմ առավել բարձր ցուցանիշներ են ապահովել՝ Պտղավան 95%, Բարեկամավան 95%, Դեբեդավան 91%, Վարազավան 90%, Աճարկուտ 87%, Խաշթառակ 87%, Ջուջևան 83% և Հաղթանակ 82% համայնքները:

Առավել ցածր ցուցանիշներ են ապահովել՝ Հաղարծին 38%, Աչաջուր 34% և Իջևան 37% համայնքները:

Ընտրողների մասնակցության առավել տոկոս է ապահովվել Ակնաղբյուրում 75%, Ենոքավանում 74%, Չինչինում 70%, Աճարկուտում 69%, Պտղավանում 68%, Կողբում 67%:

Ընտրողների ցածր մասնակցություն է արձանագրվել Հաղարծնում 26%, Բագրատաշենում 36%, Մովսեսում 38%, Թեղուտում 39%:

Ավարտելով իր զեկույցը, Մ.Մխիթարյանը նշեց, որ սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի հետընտրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր մարզում այն անցել է

կազմակերպված, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ թե դիտորդների, թե վստահված անձանց կողմից էական խախտումներ չեն արձանագրվել:
Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

2. Մարզի համայնքների 2015թ. 11 ամիսների դրությամբ սեփական եկամուտների կատարողականի մասին

/Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Զեկույցողը ներկայացրեց, որ մարզի 62 համայնքների 2015 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 3349.9 մլն. դրամ, որից սեփական եկամուտները՝ 711.9 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 21.3 %-ը, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 2638. մլն. դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիան՝ 2101.3 մլն. դրամ:

2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2963.3 մլն. դրամ, որը տասնմեկ ամսվա կտրվածքով կազմում է նախատեսվածի 98.3 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 560.7 մլն. դրամ կամ կատարվել է նախատեսվածի 86.9 %-ը:

2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2014 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ պակաս են հավաքագրվել 53.9 մլն. դրամով, այդ թվում հողի հարկի գծով՝ 17.7 մլն. դրամ, պետական տուրքի մասով՝ 2.6 մլն. դրամ, գույքի վարձակալությունից եկամուտների գծով՝ 10.7 մլն. դրամ, այլ եկամուտների գծով՝ 36.5 մլն. դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ դեկտեմբերի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 183.8 մլն. դրամ, 11 ամսվա կտրվածքով նախատեսվել է 171.0 մլն. դրամ, հավաքագրվել է 139.2 մլն. դրամ կամ կատարվել է 81.4 % - ով, թերհավաքագրումը կազմել է 31.8 մլն. դրամ:

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Հաղթանակ 19.3 %, Զորական 26.5 %, Խաչթառակ 43.1 %, Պտղավան 46.0 %, Նորաշեն 49.7 %, Գետահովիտ 56.2 %, Վ. Ծաղկավան 61.4 %, Լուսաձոր 65.4 %, և այլ համայնքներ.

- գույքահարկ - 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 251.9 մլն. դրամ, 11 ամսվա կտրվածքով նախատեսվել է 222.1 մլն. դրամ, հավաքագրվել է 206.5 մլն. դրամ կամ կատարվել է 93.0%- ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Այգեպար 48.4 %, Վազաշեն 48.9%, Այգեհովիտ 48.9 %, Ն. Ծաղկավան 53.5 %, Գետահովիտ 58.4 %, Կիրանց 60.4 %, Չինարի 62.0 %, Ոսկեպար 63.0 %, Զորական 64.2 % և այլ համայնքներ.

- տեղական տուրքեր – 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 38.3 մլն. դրամ 11 ամսվա կտրվածքով նախատեսվել է 35.3 մլն. դրամ, հավաքագրվել է 32.7 մլն. դրամ կամ կատարվել է 92.5 %- ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Այգեհովիտ 5.3 %, Վ. Ծաղկավան 18.8 %, Զորական 20.3 %, Վ.Կ.Աղբյուր 23.4 %, Խաչարձան 36.4 %, Չորաթան 36.9 %, Տավուշ 37.0 %, իսկ Արծվաբերդ, Մովսես, Դեբեդավան համայնքները դեկտեմբերի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել:

Հարկ է նշել, որ տեղական տուրքերի դրույքաչափը և տարեկան նախատեսված գումարը սահմանվում են համայնքների ավագանիների կողմից որոշակի գործունեություն իրականացնելու թույլտվության համար և տեղական տուրքերի չգանձելը ոչ մի հիմնավոր պատճառ չի կարող ունենալ:

- գույքի վարձակալությունից եկամուտներ – 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 100,4 մլն. դրամ, 11 ամսվա կտրվածքով նախատեսվել է 90.4 մլն. դրամ, հավաքագրվել է 71.4 մլն. դրամ կամ կատարվել է 79.0 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Իծաքար 18.1 %, Արծվաբերդ 29.4%, Խաշթառակ 42.0 %, Դովեղ 44.0 %, Արճիս 45.6 %, Կողբ 48.0 %, Վ. Ծաղկավան 48.9 %, Չինչին 48.9 % և այլ համայնքներ:

Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է ձեռնարկել կտրուկ միջոցներ տեղական բյուջեներով նախատեսված եկամուտները մինչև տարեվերջ հավաքագրելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության 26.02.2015 թ. թիվ 171-Ն որոշմամբ մարզի սահմանամերձ 23 համայնքների հողի հարկի և գույքահարկի փոխհատուցման նպատակով ցուցաբերվել է 57,1 մլն. դրամի պետական աջակցություն, որը ս/թ նույեմբերի 17-ի դրությամբ ամբողջությամբ հատկացվել է:

Ս/թ դեկտեմբերի 1-ի դրությամբ հատկացված գումարների մուտքագրման վերաբերյալ տեղեկատվություն չեն ներկայացրել Վազաշեն, Բարեկամավան, Բաղանիս, Դովեղ, Կոթի, Ոսկեվան, Այգեձոր, Այգեպար, Արծվաբերդ, Մովսես, Ն.Կ.Աղբյուր, Չինարի, Չորաթան, Պառավաքար, Վ.Կ.Աղբյուր համայնքները:

ՀՀ կառավարության 26.02.2015 թ. թիվ 179-Ն որոշմամբ մարզի թվով 6 սահմանամերձ համայնքների 133 բնակիչներին ունեցածությունների և ռազմական գործողությունների հետևանքով վնասված անհատական բնակելի տների վերականգնման նպատակով ցուցաբերվել է 6296.9 հազար դրամի պետական անհատույց աջակցություն:

ՀՀ կառավարության 10.03.2015 թ. թիվ 234-Ն որոշմամբ մարզի համայնքներին նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974 թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված, առաջացած լրացուցիչ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսվել է 235457.5 հազար դրամ, որից ս/թ դեկտեմբերի 1-ի դրությամբ հատկացվել է 208012.4 հազար դրամ: Համայնքների կողմից ներկայացված դեկտեմբերի 1-ի դրությամբ սուբվենցիայի գումարների փաստացի ծախսերի և դեկտեմբեր ամսվա սպասվելիք ծախսի մասին տեղեկատվությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թվով 13 համայնքներ ունենալու են տնտեսումներ: Դրամաշնորհի հատկացման պայմանագրի 2.5 կետի համաձայն չօգտագործված գումարները անհրաժեշտ է հետ փոխանցել մարզպետարանի համապատասխան հաշվեհամարին:

ՀՀ կառավարության 22.04.2015 թ. թիվ 417-Ն որոշմամբ մարզի թվով 8 սահմանամերձ համայնքների 85 բնակիչներին գնդակոծության հետևանքով պատճառած վնասների վերականգնման համար ցուցաբերվել է 6296.9 հազար դրամի պետական աջակցություն:

ՀՀ կառավարության 02.07.2015 թ. թիվ 766-Ն որոշմամբ մարզին նախատեսվել է 115,0 մլն. դրամի ընթացիկ և 11.4 մլն. դրամի կապիտալ սուբվենցիա, որն ամբողջությամբ հատկացվել է համայնքներին:

ՀՀ կառավարության 02.07.2015 թ. թիվ 766-Ն որոշմամբ կարկուտից վնասված բնակարանների տանիքների մասնակի վերանորոգման նպատակով մարզի Արճիս և Լճկաձորի համայնքների թվով 347 բնակիչների ցուցաբերվել է 17240.0 հազար դրամի պետական աջակցություն:

ՀՀ կառավարության 08.10.2015 թ. թիվ 1161-Ն որոշմամբ մարզի Վազաշեն, Այգեպար և Բերդավան համայնքներին ռազմական գործողությունների հետևանքով հասցված վնասների փոխհատուցման նպատակով հատկացվել է 2,4 մլն. դրամի ընթացիկ սուբվենցիա: Ըստ կնքված պայմանագրերի աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել ս/թ դեկտեմբերի 15-ը: Առ այսօր նշված 3 համայնքները սուբվենցիայի գումարների օգտագործման վերաբերյալ դեռևս հաշվետվություններ չեն ներկայացրել:

Նշված որոշմամբ մարզի թվով 17 սահմանամերձ համայնքներին ս/թ սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված ռազմական գործողությունների արդյունքում հասցված վնասի փոխհատուցման նպատակով թվով 566 տուժած բնակիչներին ցուցաբերվել է 63605.5 հազար դրամի պետական աջակցություն:

«Կառավարության 19.11.2015 թ. թիվ 1361-Ն որոշմամբ մարզի Իջևան, Բերդ, Նոյեմբերյան, Ազատամուտ, Բերքաբեր, Բաղանիս, Կողբ, Ոսկեվան և Ջուջևան համայնքներին ուժեղ քամիներից հասցված վնասների փոխհատուցման նպատակով հատկացվել է 13.4 մլն. դրամի կապիտալ սուբվենցիա: Համայնքների հետ կնքվել են կապիտալ սուբվենցիայի հատկացման պայմանագրեր և գումարները փոխանցվել են համապատասխան հաշվեհամարներին: Ըստ կնքված պայմանագրերի աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել ս/թ դեկտեմբերի 21-ը:

Ուժեղ քամիներից տուժած 21 համայնքների 1299 բնակիչներին հասված վնասների փոխհատուցման նպատակով ցուցաբերվել է 76563.4 հազար դրամի պետական աջակցություն:

Ընդհանուր առմամբ 2015 թվականին, բացի համայնքներին հատկացված ֆինանսական համահարթեցման դոտացիաների, ընդամենը հատկացվել է 697.4 մլն. դրամի պետական տրանսֆերտներ, այդ թվում՝ այլ ծրագրերի իրականացման նպատակով 477.2 մլն. դրամի ընթացիկ սուբվենցիա, 24.8 մլն. դրամի կապիտալ սուբվենցիա, 150.1 մլն. դրամի նպաստներ պետական բյուջեից և 45.3 մլն. դրամի կապիտալ դրամաշնորհներ կամ

«2016 թվականի պետական բյուջեով մարզի համայնքներին նախատեսվել է հատկացնել 2214.7 մլն. դրամ դոտացիա, որը 113.4 մլն. դրամով ավել է 2015 թվականին հատկացված դոտացիայից: Մինչև տարեվերջ շատ քիչ ժամանակ է մնացել և համայնքների ղեկավարներին առաջարկվում է մինչև ս/թ դեկտեմբերի 25-ը մարզպետարան ներկայացնել ավագանիների կողմից հաստատված 2016 թվականի տեղական բյուջեները:

Ավարտելով իր զեկույցը, Ռ.Ներսեսյանը նշեց, որ «Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանպետ Ռ.Ներսեսյանին.

1. Տրամադրված սուբվենցիաների վերաբերյալ հաշվետվություններն ուշացնող համայնքների ղեկավարներին հրավիրել մարզպետի մոտ քննարկման:
2. Սեփական եկամուտների տարեկան առաջադրանքի ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին հրավիրել խորհրդակցության:
3. Ս/թ դեկտեմբերի 25-ին զեկույցել սեփական եկամուտների կատարման մասին:
4. Համապատասխան մասնագիտական օգնություն ցուցաբերել համայնքներին՝ 2016թ. բյուջեները կազմելու համար:

Առաջարկվեց.

Համայնքների ղեկավարներին.

1. Հավաքագրման ցածր կատարողական ունեցող համայնքներին՝ մինչև ս/թ դեկտեմբերի 20-ը հավաքագրման կատարողականը հասցնել 90 տոկոսի, իսկ առավել բարձր կատարողական ունեցող համայնքներն աշխատանք տանեն այն 100 տոկոսի հասցնելու ուղղությամբ:
2. Սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնել 2016թ. համայնքային բյուջեները:

3. Մարզում 2015թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման մասին

/Զեկ.՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, Մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110779.4 հա, որից՝

վարելահող	-25300.6 հա
բազմամյա տնկարկներ	- 3755 հա ,որից՝
խաղողի այգիներ	-1355 հա,
պտղատու այգիներ	-2400 հա
խոտհարքներ	- 9274.5 հա
արոտավայրեր	- 63194.3 հա
այլ	- 10806.6 հա

25300.6 հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18090 հա փաստացի վարելահողից 2015թ. ցանքի տակ է դրվել 16418 հա/ կամ 90.8% / նախորդ տարվա 15482 հա-ի դիմաց /+936 հա նախորդ տարվա համեմատ/: /Կցվում է տեղեկատվությունը/:

2014թ. աշնանը կատարվել է 6991 հա /+155 հա նախորդ տարվա համեմատ/ աշնանացան: 01.12.2015թ. օպերատիվ տվյալներով կատարվել է 6134 հա /Կոթի, Ոսկեպար, Բարեկամավան, Պառավաքար, Չինարի,Վազաշեն և այլ համայնքներում սահմաններում տիրող լարվածության պատճառով շուրջ 1400հա աշնանացան 2015թ.չի կատարվել/:

«Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 275 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 17.5 տոննա գարնանացան գարու, 2.8 տոննա առվույտի սերմացուներ,որոնցով կատարվել է համապատասխանաբար 87.5 հա և 112 հա ցանք:

Պետական աջակցության ծրագրերով 2015թ.մարզին հատկացվել է.

ազդտական պարարտանյութ	- 400 տոննա,իրացվել է 400 տոննա
կալիումական պարարտանյութ	- 5 տոննա, իրացվել է 4.5 տոննա
ֆոսֆորական պարարտանյութ	- 10 տոննա, իրացվել է 3.6 տոննա
դիզելային վառելիք	- 550000լիտր,իրացվել է 237600 լիտր

Մարզի համայնքներում ավարտվել են բերքահավաքի աշխատանքները. Նախնական տվյալներով բոլոր մշակաբույսերի համախառն բերքը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը: Այն կազմել է.

h/h	Ցուցանիշի անվանումը	2014թ. /տոննա/	2015թ. /տոննա/	+/- /տոննա/	%
1	Արտադրվել է հացահատիկ և հատիկաընդեղեն	35538	37776	+2238	107
2	Կարտոֆիլ	23659	25178	+1519	106
3	Բանջարեղեն	12008	13540	+1532	113
4	Բոստան	2701	3157	+456	117
5	Պտուղ, հատապտուղ և վայրած պտուղ	10303	15353	+5050	149
6	Խաղող	14584	16724	+2140	115
7	Խոտ	65561	70491	+4930	108

Մթերվել է 7854 տոննա խաղող, 1 կգ-ը 140 դրամով, այդ թվում՝
 <<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 5070 տոննա
 <<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան-1215 տոննա /1 կգ-ը 120 դրամով/
 <<Իջևանի գինու գործարան>> ԲԲԸ – 833 տոննա
 Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ - 506 տոննա
 <<Էկոգարդեն>> ՍՊԸ – 230 տոննա:

«Կառավարության որոշմամբ 2015թ.աշնանացանի համար մարզին հատկացվել է 515 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու,որից 261.2 տոննան ներկրվել է Ռուսաստանի Դաշնությունից, 16.2 տոննա հետվերադարձ /«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման» ծրագրի շրջանակներում 2014թ. մարզի Արծվաբերդ /20 հա/ և Բերդ /7 հա/ համայնքներում հիմնվել են սերմնաբուծական տնտեսություններ, որոնց տրամադրվել է 8.1 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու՝ 2015թ. բերքահավաքից հետո 16.2 տոննա 1-ին վերարտադրության սերմացու հետ վերադարձնելու պայմանով/:

515 տոննա սերմացուն տրամադրվել է 38 համայնքի 2107 շահառուի,որոնց կողմից կատարվել է 1717 հա աշնանացան:

2012թ. - 255 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 40800000 դրամ արժեքով, որից վճարվել է **35687500 դրամ**, պարտքը կազմում է **5112500դրամ**:

2013թ. - 350 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 56000000 դրամ արժեքով, որից վճարվել է **34569600 դրամ**, պարտքը կազմում է **21430400 դրամ**:

2014թ. - 457 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 73120000 դրամ արժեքով, որից վճարվել է **33075000 դրամ**, պարտքը կազմում է **40045000 դրամ**:

Անասնապահություն

Մարզի համայնքներում 2015թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնազխաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

Անվանումը	2014թ.	2015թ.	+/-
Խոշոր եղջերավոր	37003	37064	+61
այդ թվում՝ կովեր	17478	17504	+26
Խոզեր	16548	16564	+16
Ոչխարներ և այծեր	16154	16910	+756
Մեղվաընտանիքներ	21970	21757	-213
Թռչուններ	202783	211061	+8278

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ:

Մարզի 62 համայնքներում պետպատվերի շրջանակներում ներառված կենդանիների հիվանդությունների նկատմամբ անասնաբուժական սպասարկման մատուցումն իրականացվում է համայնքային 45 անասնաբուժների և <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների Տավուշի մարզային կենտրոն>> ՊՈԱԿ-ի 4 հակահամաճարակաբանների կողմից:

Անասնաբուժներն աշխատում են պայմանագրային հիմունքներով /<< գյուղատնտեսության նախարարություն և համայնք/։ Վարձատրությունը կատարվում է ըստ իրականացված պատվաստումների քանակի՝ 1 պայմանական գլխի համար շուրջ 90 դրամ՝ նախորդ տարվա 70 դրամի դիմաց: 2015թ. պետպատվերի շրջանակներում կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվել կենդանիների 11 հիվանդությունների դեմ:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի ծրագրերի շրջանակներում որպես տոհմային կորիզ դեռևս 2011թ. ներկրվել է 80 գլուխ դանիական "Ջերսեյ" ցեղի 4-5 ամսական հղի երինջներ, որոնք խմբակային կարգով պահվում են Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում: 15-ական գլուխ էգ հորթեր որպես մայրացու կոոպերատիվ հիմունքներով տրամադրվել են Կիրանց, Նավուր, Գոշ, Գանձաքար, Արծվաբերդ համայնքներին, որոնց համար կառուցվել են ֆերմաներ: Մինչև տարեվերջ կավարտվի Կողբի ֆերմայի կառուցման աշխատանքները:

Հիմնադրամի կողմից Լուսաձոր համայնքում գտնվող անասնապահական համալիրում 2014թ. կառուցվել է նոր հորթանոց՝ տոհմային հորթեր բուծելու և մինի ֆերմաներին տրամադրելու նպատակով:

Այն նպաստում է մարզում տոհմային գործի բարելավմանը /նոր բարձր կաթնատու և մսատու ցեղատեսակների ընդլայնում/:

Հիմնադրամի անասնապահական համալիրում կառուցվել են կաթի վերամշակման, պանրի և խտացված կերերի արտադրամասեր:

Սարիգյուղ և Այգեհովիտ համայնքներում կառուցված գյուղատնտեսական տեխնիկայի կայանները սպասարկում են Իջևանի տարածաշրջանի 15 համայնքների մոտ 6500 գյուղացիական տնտեսությունների:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արտոսների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:

Ծրագրում ընդգրկված Տավուշի մարզի Ն. Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Աչաջուր, Լուսածոր, Ոսկեպար, Բաղանիս, Ջուջևան, Դովեղ համայնքներում ստեղծվել են արտոսագործողների սպառողական կոոպերատիվներ: Նշված համայնքներում մինչև 2014թ. ավարտվել են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման շինարարական աշխատանքները և կոոպերատիվների կողմից ձեռք է բերվել 11 հատ ՄՏՁ-82 մակնիշի տրակտոր, 9 հատ հավաքիչ-մամիչ, 10 հատ տրակտորային խոտհնձիչ, 10 հատ տրակտորային խոտհավաք և 9 հատ գութան:

2014թ. ծրագրում ընդգրկվել և արտոսագործողների սպառողական կոոպերատիվներ են ստեղծվել են նաև Նավուր, Չինչին, Պառավաքար համայնքներում:

Նավուր համայնքում ավարտվել են, իսկ Պառավաքարում ընթացքի մեջ են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման շինարարական աշխատանքները: Նշված համայնքների կոոպերատիվները ևս ամբողջապես ստացել են գյուղատնտեսական տեխնիկան/Պառավաքարը նաև 1 հացահատիկահավաք կոմբայն/:

Մարզի Վարազավան, Վ.Ծաղկավան, Տավուշ, Չինարի, Արծվաբերդ, Կողբ և Կոթի համայնքները 2015թ. ընդգրկվել են վերոնշյալ ծրագրում: Կոոպերատիվներին գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումն ընթացքի մեջ են:

ՕԲՄՖԱՄ Հայաստանի կողմից Տավուշի մարզում իրականացված <<Կայուն կենսապահովման >> ծրագրի շրջանակներում Սևքար համայնքում 2013թ. ստեղծվել է սառնարանային տնտեսություն թարմ մրգի և բանջարեղենի պահպանման համար/250խմ/ և ջերմոցային համայնքային տնտեսություն՝ սոցիալական ձեռնարկություն/400քմ/, իսկ 2014թ՝ փոքր համայնքային վերամշակող գործարան: Այրում համայնքում 2014թ. հիմնվել է համայնքային վերամշակող գործարան՝ Այրումի <<Միրգ>> ՍՊԸ: Ջերմոցային համայնքային տնտեսություն՝ սոցիալական ձեռնարկություններ են ստեղծվել նաև Ակնաղբյուրում /3հատ ջերմոցներ՝ ընդհանուր 900քմ/, Ն.Ծաղկավանում/400քմ/, Հաղթանակում/500քմ/, Լճկաձորում/550քմ/, Աչաջուրում/400քմ/, Սարիգյուղում/400քմ/, Հովքում/400քմ/, իսկ Պտղավանում, Կողբում, Գետահովտում և Դիտավանում, Այգեհովիտում, Գոշում 400-ական քմ. ջերմատներ հիմնվել են 2015թ.:

Մարզի տարածքում <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿ>> շրջանակներում/Հայկական միրգ/ 2014-2015թթ. հիմնվել է 22.3 հա պտղատու այգի /դեղձ, ընկույզ, նուռ, պիստակ, նեկտարիտին/:

Արճիսում - 4.5 հա նեկտարիտինի, 8 հա կեռասի
Պտղավանում - 3.8 հա ընկույզի
Դեբեդավանում - 4.1 հա սալորի, 1.9 հա դեղձի:

<< կառավարության 02.07.2015թ.թիվ 766-Ն որոշմամբ մարզին հատկացված 28մլն. դրամով Նոյեմբերյանի տարածաշրջանի 6 համայնքներում տեղադրվել են 10 հատ հակակարկտային կայաններ:

Մարզի սահմանամերձ Այգեհովիտ համայնքում ադրբեջանական կողմի հրետակոծությունների պատճառով 22.6 հա խաղողի այգիների բերքը չհավաքած 46 խաղողագործներին << կառավարության կողմից որպես փոխհատուցում տրամադրվել է 16.1 մլն. դրամ:

Հանձնարարվեց.

**Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանին.**

1. Կրկին անգամ շրջաբերականներ ուղարկել՝ սերմացուների գումարների հետ վերադարձման վերաբերյալ:
2. Միջոցներ ձեռնարկել աշնանացանի աշխատանքներն ավարտին հասցնելու ուղղությամբ:
3. Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկանք՝ 2016թ. համար անհրաժեշտ միջոցների վերաբերյալ:

Առաջարկվեց.

Համայնքների ղեկավարներին.

1. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն ներկայացնել 2016թ. գյուղմթերքների արտադրության և վերամշակման համար անհրաժեշտ միջոցների մասին տեղեկատվություն:
2. Ձեռնարկել միջոցներ՝ ստացված սերմացուի հետ վերադարձման գումարները հավաքագրելու ուղղությամբ:

**4. Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պետության
պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականության,
արդյունավետության և ստուգման արդյունքների ամփոփում**

/Զեկ.՝ Մ.Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության
վարչության գլխավոր մասնագետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ գլխավոր հատակագծերի մշակման անհրաժեշտությունը ունեն մարզի բոլոր համայնքները, անհրաժեշտ է գտնել ֆինանսավորման աղբյուրներ, գյուղական համայնքներին անհրաժեշտ է մոտ 5 մլն. դրամ գումար: Շին թույլտվություններ և ավարտական ակտերի տրամադրումը եռօրյա ժամկետում չի կատարվում շատ համայնքապետերի կողմից:

Նա նաև ներկայացրեց, որ գերեզմանատները շահագործող կազմակերպությունների ստեղծման, գերեզմանատների չափագրման, վկայականների տրման, գլխավոր հատակագծերի մշակման գործընթացը չի կիրառվում համայնքներում: Համայնքներում չկան շահագործող կազմակերպություններ, չեն կատարվում գերեզմանատների չափագրման, գույքագրման, վկայականների տրամադրման աշխատանքները, Նոր գերեզմանատեղերի համար հատկացման որև սխեմա չի մշակվել:

Հանձնարարվեց.

**Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության
վարչության գլխավոր մասնագետ Մ.Մելքումյանին.**

1. Ուշադրության կենտրոնում պահել համայնքի ղեկավարի կողմից քաղաքաշինության բնագավառում պետությանը պատվիրակված լիազորությունների կատարման օրինականությունը, անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան միջամտություն:

Առաջարկվեց.

Համայնքների ղեկավարներին.

1. Ձեռնարկել միջոցներ՝ համայնքի գլխավոր հատակագծերի կազմման համար անհրաժեշտ միջոցներ հայթհայթելու և նախագծերը պատվիրելու ուղղությամբ:
2. Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների եզրերին կառուցապատում կատարելու դեպքում պարտադիր համաձայնեցնել մարզպետարանի հետ՝ պահպանելով եզրագծից 18մ հեռավորություն:

ՄԱՐԶՊԵՏ

Հ.ԱԲՈՎՅԱՆ

